

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽԵՄՉՅԱՆ ՄԱՐԻՆԵ ՀԱՅԿԻ

ՆՎԻՐԱՏՈՒՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ (ՏԻՊԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)

Ժ.01.05 - «Բանահյուսություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտություններ թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ -2018

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության
և ազգագրության ինստիտուտում

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՍԱՐԳԻՍ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐ՝

Բանասիրական գիտությունների դոկտոր
ԱՐՄԵՆ ԵՂԻՇԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ
ՆՎԱՐԴ ԽԱԶԱՏՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ Երևանի պետական
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հուլիսի
6-ին՝ ժամը 12:30-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինս-
տիտուտում գործող ԲՈՀ-ի Գրականագիտության 003 մասնագիտական
խորհրդում:

Հասցեն՝ Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի
անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունիսի 5-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝

Ս.Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ հեքիաթագիտությունն իր մեջ ընդգրկում է հեքիաթների գրառումը, հրատարակությունը և ուսումնասիրությունը, որոնք երբեք տարանջատված չեն եղել. գրառմանը զուգահեռ դրանք հրատարակվել և ուսումնասիրվել են:

Հեքիաթը մարդուն ուղեկցել է հնուց ի վեր. մարդու սոցիալական կարգավիճակը, երազանքները, բնության առեղծվածային երևույթները, կրոնաժխական և առասպելաբանական պատկերացումներն իրենց բազմազան դրսևորումներն են գտել հրաշապատում, իրապատում և կենդանական հեքիաթերում, որոնք հյուսվելով, պատմվելով և փոխանցվելով սերնդից սերունդ, տարածաշրջանից տարածաշրջան՝ հասել են մեր օրերը և երբեք չեն կորցրել իրենց արդիականությունը:

Հեքիաթի հերոսն ունի գործողությունների որոշակի հաջորդականություն՝ կախված նրա առջև դրված գլխավոր խնդրի իրագործման բարդությունից: Հայկական հեքիաթը սովորաբար սկսվում է գործող անձանց թվարկումով, այնուհետև գլխավոր հերոսը տարբեր պատճառներով (հրաշագործ առարկա ձեռք բերելու նպատակով, հմայական արգելքը խախտելու դեպքում, անեծքի հետևանքով և այլն) հեռանում է տնից և տարբեր փորձություններ հաղթահարելով, հասնելով իր գերագույն նպատակին՝ վերադառնում: Առանց կողմնակի օգնության հերոսն ի զորու չէ միայնակ իրագործել իր առջև դրված բազմաթիվ ու բազմաբնույթ փորձությունները: Սույն աշխատանքի հիմքում ընկած է հեքիաթի սյուժեից բխող, գլխավոր հերոսի գործողություններին աջակցող և նպաստող նվիրատուների, խորհրդատուների, գերբնական հատկություններով օժտված կիսաառասպելական ուղեկիցների ու հրաշագործ առարկաների ուսումնասիրությունը՝ տիպահամեմատական քննությամբ:

Ինչպես նշել է ռուս անվանի հետազոտող Վլադիմիր Պրոպը. «Հեքիաթն այնքան հարուստ է և բազմազան, որ ուսումնասիրել հեքիաթի բոլոր երևույթներն ամբողջությամբ, ողջ ծավալով և բոլոր ժողովուրդների մոտ անհնարին է»¹: Այս խոսքերը վկայում են այն մասին, որ հայ հեքիաթագիտության մեջ առկա ուսումնասիրությունները, իրենց տեսակի մեջ լինելով շատ կարևոր և արժեքավոր, չեն կարող լիակատար կերպով ներկայացնել հեքիաթ-երևույթը, և հեքիաթի ժանրն իր բազմազան

¹ **Пропп В.**, Морфология сказки, Издательство “Наука”, Москва, 1946, с. 7.

խնդիրներով ունի դեռևս չուսումնասիրված շատ հարցեր, որոնք կարևոր են հեքիաթագիտությունն ամբողջացնելու համար: Թեմայի արդիականությունը պայմանավորված է հայ բանահյուսական ժառանգության մեջ հեքիաթի ժանրի մեծածավալ քանակության տեսական ուսումնասիրությունների անբավարար վիճակով: Հեքիաթն իր տեսակներով (կենդանական, հրաշապատում, իրապատում), առեղծվածներով, բազմատեսակ ու բազմաբնույթ գործող անձանցով, սյուժետային անհավանական զարգացումներով, ասույթաբանական տարրերի ընդգրկումով, ծիսակրոնական և առասպելաբանական աղերսներով միշտ կարիք ունի ուսումնասիրության:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան Պատմական Հայաստանի բոլոր պատմաագագրական տարածաշրջաններում (Այրարատ, Շիրակ, Արցախ, Ուտիք, Սյունիք, Գուգարք, Ալաշկերտ, Մանազկերտ, Բաղեշ, Մուշ, Հարք, Տարոն, Սասուն, Վան-Վասպուրական, Մոկս, Կարս, Ղարադաղ, Տավուշ և այլն) կենցաղավարած հեքիաթների նյութն է՝ տպագրված «Հայ ժողովրդական հեքիաթներ», «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարերի հատորներում և առանձին տարածաշրջանների բանահյուսական ժողովածուներում:

Ուսումնասիրության նպատակն է տիպահամեմատական քննության ենթարկել հայկական տպագիր ժողովրդական հեքիաթի հերոսի գործողություններին՝ նպաստող նվիրատուներին, խորհրդատուներին, գերբնական հատկություններով օժտված օգնականներին և հրաշագործ առարկաները (այսուհետև՝ հերոսի օգնականներ):

Այդ առումով մեր առաջ դրվել են խետկյալ խնդիրները. ա) քննել և ներկայացնել հեքիաթի հերոսի օգնականների ողջ համակարգը, բ) բացահայտել դրանց առանձնահատկությունները և դերը հեքիաթի սյուժեի զարգացման ընթացքում, գ) դասակարգել հեքիաթի հերոսի օգնականներին ըստ գործառույթների և տեսակների, դ) բացահայտել հեքիաթի հերոսի օգնականների ծիսակրոնական և առասպելաբանական ակունքները, ե) ներկայացնել հեքիաթի հերոսի օգնականներին առնչվող մոտիվների զուգահեռները ըստ հեքիաթների տիպերի միջազգային դասակարգման, զ) տալ հեքիաթի հերոսի օգնականների քանակական պատկերը հայկական տպագիր հեքիաթներում, որով և կամբողջացվի հայ ժողովրդական հեքիաթներում նվիրատուների և խորհրդատուների գործառույթների քննությունը:

ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Աշխատանքի համար որպես տեսական հիմք են ծառայել Վ. Պրոպի², Ե. Մելետինսկու³, Մ. Աբեղյանի⁴, Ս. Հարությունյանի⁵ հիմնարար աշխատությունները: Ուսումնասիրության համար օգտագործվել են ցայսօր տպագրված բոլոր հեքիաթները, ինչպես նաև արխիվային որոշ հեքիաթներ: Պատմահամեմատական և վերլուծական մեթոդներով ընտրվել են այն հեքիաթները, որոնցում առկա են հեքիաթի հերոսի օգնականները, դրանք դասակարգվել են, առանձնացվել տիպերը և տրվել գործառոյթները, երբեմն օգտագործվել է նկարագրական մեթոդը: Քանակական վերլուծության մեթոդով տրվել է հեքիաթի հերոսի օգնականների հանդես գալու հաճախականության պատկերը՝ ուսումնասիրված հեքիաթների սահմաններում, որոնք մանրամասնորեն ներկայացված են ատենախոսության հավելվածներում:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ԼՈՐՈՒՅԹԸ

Անդրադառնալով հայկական հեքիաթի մինչ օրս կատարված ուսումնասիրություններին՝ կարելի է հավաստել, որ սույն աշխատանքում դրված խնդիրները հայ հեքիաթագիտության մեջ գրեթե չեն քննվել: Առաջին անգամ տիպահամեմատական քննության են առնվել հայկական հեքիաթի հերոսի վերջնական նպատակին հասնելու գործում անգնահատելի դեր ունեցող օգնականները, դասակարգվել ըստ գործառոյթների և տեսակների, բացահայտվել դրանց ծիսակրոնական և առասպելաբանական ակունքները, ներկայացվել օգնականներին առնչվող

² **Пропп В.**, указ. труд.

³ **Мелетинский Е.**, Герой волшебной сказки. Происхождение образа, Издательство «Традиция», Москва-Санкт-Петербург, 2005.

⁴ **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Ա, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1966, **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Է, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1966:

⁵ **Հարությունյան Ս.**, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Համազգային» տպարան, 2000: **Հարությունյան Ս.**, Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, «Մուղի» հրատ., 2001, **Հարությունյան Ս.**, Բանագիտական ակնարկներ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2010:

մոտիվների զուգահեռները ըստ հեքիաթների տիպերի միջազգային դասակարգման:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունն ունի տեսական և գործնական նշանակություն, այն կարող է օգտակար լինել հայ բանագիտությանը, մասնավորապես՝ հեքիաթագիտությանը զբաղվողների, ինչպես նաև բանասիրական ֆակուլտետի ուսանողների համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության տեսության և պատմության բաժնում 2014-2018 թվականներին: Նույն բաժնում էլ քննարկվել է և հանձնարարվել հրապարակային պաշտպանության: Ատենախոսության առանձին հատվածներ տպագրվել են հանրապետական գիտական պարբերականներում և ժողովածուներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, համառոտագրություններից, օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից և երեք հավելվածներից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ տրված է ատենախոսության ընդհանուր բնութագիրը, ներկայացված են աշխատանքի առարկան, նպատակն ու խնդիրները, թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, գործնական նշանակությունը, տեսական և մեթոդաբանական հիմքը: Ներկայացված է նաև հայ հեքիաթագիտության պատմությունը իր ձեռքբերումներով, թեմային առնչվող հայրենական և արտասահմանյան բանագետների ուսումնասիրությունների ամփոփ պատկերը, ինչպես նաև աշխատանքի գլուխների համառոտ բովանդակությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՆԿԻՐԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԵՔԻԱԹԻ ՀԵՐՈՍԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՊԱՏՈՂ ԿԵՐՊԱՐՆԵՐ

1.1. Նվիրատուների ու խորհրդատուների դասակարգումը

Հայկական հեքիաթների տպագիր նյութի ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են այն հեքիաթները, որոնք հիմք են հանդիսացել նվիրատուների ու խորհրդատուների տիպահամեմատական քննության համար: Մեր հեքիաթներում նվիրատուների, խորհրդատուների, ինչպես նաև հերոսի գործողություններին նպաստող գերբնական հատկություններով օժտված օգնականների և հրաշագործ առարկաների ամբողջության (այսուհետև՝ օգնականներ) ընդգրկվածությունը լայն է ու բազմազան: Մարդը ծնված օրվանից, որքան էլ շրջապատված լինի սիրով, հոգատարությամբ ու բարությամբ, մշտապես իր վրա է կրում միջավայրի ու բնական երևույթների բացասական ազդեցությունը՝ ստիպված լինելով առաջացած խնդիրների համար լուծումներ գտնել: Կախված գիտակցական կյանքի զարգացման աստիճանից՝ մարդը տարբեր կերպ է ընկալել բնության առեղծվածային երևույթներն ու իրեն շրջապատող առարկաները, ոգեղենացրել դրանք, որոնք իրենց դրսևորումներն են գտել կրոնածիսական պատկերացումներում, առասպելներում ու հեքիաթներում:

Հայկական հեքիաթների հերոսի օգնականներին դասակարգելիս առավելապես առաջնորդվել ենք հրաշապատում հեքիաթների ուսումնասիրությամբ և քննությամբ: Դասական հրաշապատում հեքիաթի համար բնորոշ է հերոսի նախնական փորձությունը (ստուգումը), որն ավարտվում է օգնական կամ հրաշագործ միջոց ստանալով (նվիրատվությամբ): Նախնական փորձության ընթացքում հերոսը դրսևորում է իր իսկական արժանիքները՝ դրանով իսկ հնարավորություն ստանալով վաստակելու հրաշագործ միջոցը:

Արցախյան «Թաքավերին տղան» հեքիաթում (**Սարգսյան Ա.**, Արցախի բանահյուսությունը, № 1(8)) թագավորը (խորհրդատու) մեռնելիս որդուն պատվիրում է՝ չբացել սենյակներից մեկի դուռը: Արգելքը խախտվում է հերոսի կողմից, և հերոսն այդ սենյակում տեսնելով մի գեղեցկուհու նկար՝ ուղևորվում է նրան փնտրելու: Հերոսի նախնական փորձությունը կատարվում է ճանապարհին՝ աղքյուրի մոտ՝ սպիտակամորուս ծերունու (նվիրատու, խորհրդատու) կողմից: Հերոսը դրսևորում է մարդկային բարձր հատկանիշներ (աղքատ ծերունուն կերակրում և փող է տալիս), որի համար պարգևատրվում է հոռու թքով և խորհուրդներ ստանում: Հրաշագործ միջոցը՝ ծերունու նվիրած թալիսմանը, մինչև հերոսին փնտրվող սուբյեկտին հասցնելը, կատարում է նրա անբասիր վարքագծի ստուգումը (մրջյուններին չտորոելը, ձկների թագավորի աղջկան փրկելը, մեծ

գիշատիչ թռչունին մացառներից ազատելը): Ենթատեքստում ըմբռնվում է, որ օգնություն ստացած երախտագետ կենդանիները հետագայում փոխհատուցելու են հերոսին: Փնտրվող աղջկան՝ արքայադստերը, ստանալու համար հերոսը ենթարկվում է հիմնական փորձությանը, այն է՝ կատարել թագավորի երեք պայմանները:

Հայկական հեքիաթներում հաճախ կան նաև լրացուցիչ փորձություններ՝ հերոսի՝ կեղծ հերոսի հետ նույնականացման առնչությամբ: Քաջագործություն կատարող և հեքիաթի գլխավոր օբյեկտը ձեռք բերող հերոսը պետք է ապացուցի (կեղծ հերոսի մարմնի վրա կատարած դրոշմի, թագավորական թևկապի, սպանած դևի ականջների, քաչալ ձևանալու, տիկնիկի միջոցով և այլն), որ ինքն է այն կատարել, ոչ թե հակառակորդին քնակոչ հերոսը (եղբայր, քենակալ, ուղեկից, դրածո հարսնացու և այլն): Եթե փնտրվող առարկայի ձեռքբերումը կամ քաջագործությունը կատարվում է անդրաշխարհում, ապա կեղծարարության մերկացումը իրականանում է այսրաշխարհում:

Հեքիաթներից մեկում «Ավչու տղի հեքիաթը» (Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀԺՀ), հ. 1, № 23) գլխավոր հերոսը որսորդի տղան է, իսկ նրա հիմնական խորհրդատուն և նվիրատուն՝ մայրը: Հերոսի նախնական փորձությունը կատարվում է անտառում. գիշերը նա անտառում (անտուղակի նվիրատու) ձեռք է բերում լույս տվող մորթի, որի պատճառով էլ ընթանում է հեքիաթի սյուժեի հետագա զարգացումը՝ մինչև հանգուցալուծում: Ինչպես հայկական բազմաթիվ հեքիաթներում, այս հեքիաթում նույնպես կա մի խորհրդատու՝ թագավորի նազիրը, ում թագավորին տված խորհուրդների պատճառով գլխավոր հերոսը ենթարկվում է տարբեր փորձությունների, որոնք հարթահարում է երախտապարտ ձկան, գերբնական հատկություններով օժտված ուղեկիցների (շատ ուտող, շատ խմող, արտակարգ լսողությամբ, շատ ուժեղ) օգնությամբ:

Հեքիաթի հերոսի բազմապիսի օգնականները հանդես են գալիս թե՛ նախնական, թե՛ հիմնական, թե՛ լրացուցիչ փորձությունների ժամանակ: Հայկական հեքիաթների հերոսի օգնականները դասակարգվել են երկու աստիճանով: Մեր դասակարգման առաջին աստիճանով օգնականների ամբողջությունը ստորաբաժանված է հինգ ենթախմբերի. 1) մարդ և մարդակերպ նվիրատուներ ու խորհրդատուներ, 2) կենդանի և թռչուն նվիրատուներ ու խորհրդատուներ, 3) բնաշխարհը ներկայացնող նվիրատուներ և խորհրդատուներ, 4) գերբնական հատկություններով օժտված գործող անձինք, 5) հրաշագործ առարկաներ: Մեր դասակարգման երկրորդ աստիճանով հեքիաթի հերոսի օգնականների յուրաքանչյուր

ենթախումբ ներկայացված է ըստ նրանց գործառույթների, տեսակների և հանդես գալու կերպի:

1.2. Մարդ և մարդակերպ նվիրատուներ ու խորհրդատուներ

Այս ենթագլխում ներկայացված են մարդ և մարդկային կերպարանքով ու հատկանշներով այն նվիրատուներն ու խորհրդատուները, ովքեր առանցքային դերակատարություն ունեն հայկական հեքիաթի գլխավոր հերոսին աջակցելու գործում:

Հայկական հեքիաթների վրա խոր հետք են թողել մարդու կրոնադիցաբանական պատկերացումները՝ սկսած նախնադարյան տոհմացեղային ժամանակներից մինչև քրիստոնեություն՝ ներառելով գրադաշտականության և հելլենիզմի շրջանները: Հայոց մեջ նախնադարից են առաջ գալիս բնության անշունչ առարկաների ոգեղենացումը, տոտեմական նախնիների, բնության չորս տարերքի, ոգիների պաշտամունքը, աշխարհի, հոգու, մահվան և հանդերձյալ կյանքի մասին նախնական պատկերացումները: Հայկական դիցարանի ձևավորումից ի վեր հայ ավանդության մեջ իրենց արտացոլումներն են գտել մի շարք աստվածություններ (Հայկ, Արամ, Վահագն, Միհր, Անգեղ և այլն), սակայն հեքիաթներում մեծամասամբ անվանակիր աստվածներ հանդես չեն գալիս: Մարդակերպ նվիրատուների և խորհրդատուների շարքում առանձնահատուկ տեղ ունի **աստվածը**. երբեմն նրա անմիջական միջամտությամբ հայկական հեքիաթի գլխավոր հերոսը կարողանում է հաղթահարել նախնական, լրացուցիչ և հիմնական փորձությունները: Աստծո տեսանելի կամ անտեսանելի ներկայությունն առկա է Պատմական Հայաստանի յուրաքանչյուր պատմաազգագրական տարածաշրջանի հեքիաթների գերակշռող մասում: Աշխատանքում վեր են հանված աստծո՝ որպես նվիրատուի և խորհրդատուի գործառույթները հայկական հեքիաթներում: Ներկայացված են աստծո նվիրատվության և խորհրդատվության հետևյալ ձևերը. ա) լսելով հերոսի խնդրանքը կամ առանց խնդրանքի (անժառանգ ամուսիններին կամ անժառանգ պառավին զավակ պարգևել (հաճախ կենդանական կամ բուսական ծագումով՝ հետագայում կերպարանափոխվելու հնարավորությամբ), աղքատին ունեցվածքի տեր դարձնել (երբեմն փորձության ենթարկելով), հրաշագործ հատկություններով առարկաներ (լույս տվող ձու, սփռոց, գլխարկ, մոմակալ, շվի և այլն) կամ կենդանիներ (ծի, վագր, աքաղաղ և այլն) նվիրել, հերոսին օժտել շնորհներով), բ) միջնորդավորված (ծերունու, հրեշտակի, դերվիշի կերպարանքով), գ) օգնություն հերոսին կերպարանափոխությամբ (եղնիկ, կով, օձ դարձնելով), դ) խորհուրդներ

երազում: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հեքիաթի հերոսին՝ դժվարագույն խնդիրներն իրագործելու ճանապարհին ճիշտ ժամանակին և ճիշտ տեղում հայտնված նվիրատուներն ու խորհրդատուները, տարաբնույթ օգնականները և հրաշագործ առարկաներն ու կենդանիները մեծամասամբ ուղարկված են աստծո կողմից:

Երկրորդ ենթաբաժնում ներկայացված է նվիրատու և խորհրդատու **ծերունին**: Հեքիաթի գլխավոր հերոսի գործողություններին նպաստող կամ խոչընդոտող, երբեմն էլ հեքիաթի հերոս հանդիսացող ծերունին ունի բազմաբնույթ գործառույթներ. նա կարող է լինել աստծո կողմից միջնորդավորված, ճակատագիր գրող, հերոսի մտքերը կարդացող, նվիրատու, խորհրդատու, խնամախոս, ծերունու կերպարանք առած իրեշտակ, երազում հայտնված ծերունի և այլն: Մի շարք հեքիաթներում սպիտակամորուս ծերունին հերոսին անդրաշխարհ տեղափոխելու միջնորդ է, կամ հայտնվում է անդրաշխարհից՝ հերոսին օգնելու խորհրդատվությամբ կամ նվիրատվությամբ: «Ճակտի գիր» հեքիաթում (ՀԺՀ, հ. XIV, № 12) այնկողմնային աշխարհի սպիտակամորուս իմաստուն ծերունին (որոշ հեքիաթներում՝ ճակատագիր գրող) իր մոտ հայտնված թագավորին տեղեկացնում է՝ ում հետ պետք է նա ամուսնանա:

Ծերունու հետ որոշ ընդհանրություններ ունի **դերվիշը**: Դերվիշի առկայությունը մեր հեքիաթներում պայմանավորված է տարածաշրջանում քրիստոնեության և մահմեդականության հարևանությամբ կենցաղավարմամբ, որի արդյունքում հեքիաթներ են ներմուծվել ոչ միայն դերվիշների գործառույթները, այլև՝ նրանց՝ Մերձավոր Արևելքում օգտագործվող անվանումները (դարվիշ, դարվեշ, դավրիշ, դավրեշ, դըվրեշ, դէվրիշ, դովրիշ, դաբրիշ և այլն): Հայկական որոշ հեքիաթներում նվիրատու և խորհրդատու դերվիշը դուրս է գալիս աղբյուրից. այս հանգամանքը վկայում է այն մասին, որ դերվիշը կապվում է անդրաշխարհի հետ աղբյուրի միջոցով: Ընդհանուր առմամբ հայկական հեքիաթի դերվիշն իր գիտելիքներով, բարությանբ, հմայական կարողություններով դառնում է հեքիաթի հերոսի նվիրատուն (երազում հերոսին գինի է տալիս, որի զորությամբ նա ուժեղանում է (Կարս. հայոց բանահյուսական մշակույթը (այսուհետև՝ Կարս), № 13(13)), տալիս է հրաշագործ մատանի (**Սարգսյան Ա.**, Արցախի բանահյուսությունը, № 1(19), ինչպես նաև խորհրդատուն (թագավորին խորհուրդ է տալիս՝ ինչպես չորացած այգին վերականգնի (Ղարադաղի բանահյուսությունը, № 1(1)), հերոսին սովորեցնում է՝ ինչպես սպանի կնոջն առևանգող անմահ թզուկին (Կարս, № 13(13))՝ դրանով իսկ օգնելով նրան հասնելու իր առջև դրված խնդրի լուծմանը:

Հայկական հեքիաթներում գլխավոր հերոսի գործողությունների ընթացքում մեծ դեր ունի **թագակիր անձը** (**թագավոր, թագուհի, արքայադուստր, արքայազն**): Ժողովուրդը հնուց ի վեր ակնածանքով ու երկյուղածությամբ է համակված դեպի իր երկրի տիրակալը, ուստի ոչ միայն մեծարում է, այլև՝ որոշ պատումները հյուսում նրա անվան շուրջ: Հեքիաթներում թագավորը պետական, քաղաքական, իրավական առաքելությունից զատ հանդես է գալիս նաև որպես նվիրատու և խորհրդատու: Ի տարբերություն հեքիաթներում հանդես եկող բազմաթիվ խորհրդատուների և նվիրատուների (ծերունի, պառավ, դերվիշ, ծի, աղավնի և այլն)՝ թագավոր գործող անձը մեծամասամբ հեքիաթ է մուտք գործում սյուժեի սկզբում՝ հանձնարարականներ տալով հերոսին: Թագավորը հայկական հեքիաթներում գլխավոր խորհրդատուներից մեկն է: Հեքիաթների մեծ մասում թագավորի խորհրդով է հերոսն ուղղորդվում դեպի իր նպատակակետը, թագավորի կողմից դրվում է հմայական արգելք, որը մշտապես խախտվում է, և հերոսը ենթարկվում է փորձությունների: Հայկական հեքիաթներում թագավորի՝ հերոսին արված նվիրատվությանը կամ խորհրդատվությանը երբեմն միջամտում են պալատականները, ծառայողները կամ թագավորական ընտանիքի անդամները (**թագուհի, վեզիր, խոհարար, կոշկակար, դերձակ, թագուհի, արքայադուստր, արքայազն** և այլն): Այդ միջամտությունները կարող են լինել և՛ ի նպաստ հերոսի գործողություններին, և՛ հերոսին իր ճանապարհից շեղելու նպատակով: Խորհրդատու և նվիրատու թագավորը կարող է լինել ոչ միայն հերոսի, այլև դևերի մոտ գերի ընկած արքայադուստր կամ արքայազնի հայրը, ինչպես նաև հարևան երկրի կամ անդրաշխարհում գտնվող մեկ այլ թագավոր:

Հայկական հեքիաթների խորհրդատու և նվիրատու **պառավն** ունի բազմաբնույթ գործառույթներ: Ծնունդ առնելով ժողովրդի առասպելաբանական, դիցաբանական, ծիսական պատկերացումներից՝ պառավը նախ հեքիաթի հերոսի **մայրն** է կամ հերոսի մեռած մոր վերամարմնավորված հոգին: Մայր-պառավը (իրական աշխարհում և անդրաշխարհում) հանդես է գալիս ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերով՝ իր խորհուրդներով և նվիրատվությամբ նպաստելով կամ խոչընդոտելով հերոսի գործողություններին: Անդրաշխարհի պառավը հանդես է գալիս որպես կապող օղակ հերոսի և անդրաշխարհի միջև. հերոսին մատնացույց է անում իրական աշխարհի դուրս գալու ճանապարհը կամ հայտնվում է իրական աշխարհում՝ խորհրդատվությամբ և նվիրատվությամբ օգնելու հերոսին: Կախարդ (դևի կերպարանք առած, ջաղու, խնոցի հեծնող) պառավն իր խորհուրդները և նվերները տալիս է հակահերոսին՝ դրանով

իսկ խոչընդոտելով հերոսի գործողություններին: Պակաս կարևոր դեր չեն խաղում նաև հյուրընկալ (երբեմն մայրական պարտականությունները ստանձնող), հարեվան, անիծող պառավները, որոնց անմիջական միջամտությամբ փոխվում է հերոսի գործողությունների ընթացքը:

1.3. Կենդանի և թռչուն նվիրատուներ և խորհրդատուներ

Հայ ժողովրդական հեքիաթներում հերոսի նպատակին հասնելու ճանապարհին մեծ դեր ունեն օգնական կենդանիները՝ իրենց խորհրդատվությամբ և նվիրատվությամբ: Ըստ հնագույն պատկերացումների՝ մարդու և բնության, մարդու և կենդանական աշխարհի կապը սերտ է եղել. կենդանիներից շատերը հանդես են եկել նախահոր դերում, որոնցից սերել են տարբեր ազգեր, ուստի կենդանիները, որպես մարդկային հասարակության զարգացման ընթացքում հանդես եկած կարևոր օղակ, զգալի հետք են թողել բանավոր ավանդության մեջ: Հատկապես հեքիաթների սյուժեներում նրանց վերագրվել է օգնականի դեր: Կենդանիները խոսում են մարդկային լեզվով, օժտված են գերբնական ուժով և տարածության մեջ մեծ արագությամբ տեղաշարժվելու ունակությամբ: Կենդանիներն իրենց մեջ կրում են հերոսի նախնիների հոգին, գիտեն հերոսի անցնելիք ճանապարհի վրա ծառացած դժվարությունների մասին և որպես կապող օղակ են այս և այն աշխարհների միջև: Կենդանիները կարող են տրված լինել հերոսի մահացած կամ մահվան մահճում գտնվող ծնողի կողմից, աստծո կողմից ուղարկված (երբեմն կենդանու տեղը մատնանշվում է երազում), ինչպես նաև կարող են լինել հերոսի գործողությունների ընթացքում նրա ճանապարհին հանդիպած և նրա կողմից ուշադրության արժանացած երախտապարտ կենդանիներ: Որպես օգնական հանդես եկող կենդանիները մեր հեքիաթներում բազմազան են՝ սկսած ամենափոքր մտեղից մինչև հրեղեն կամ ծովեղեն ձին կամ երբեմն հերոսի գործողություններին խոչընդոտող դևը կամ վիշապը:

Օգնական **ծին** մեծամասամբ հերոսի տրամադրության տակ է անցնում անդրաշխարհից՝ ծովից, թագավորական ախոռից, ընկույզի միջից (ՀՏՀ, հ. I, № 1, ՀՏՀ, հ. IV, № 7): Հեքիաթի օգնական ծին բացի խոսելուց և խորհուրդներ տալուց, սլանում է մեծ արագությամբ կամ օդ բարձրանում՝ թեպետ մեր հեքիաթներում չի ընդգծվում ծինո՝ թևեր ունենալու առկայությունը: Ինչպես հայկական հեքիաթի բազմաթիվ կենդանիներ, ծին հաճախ հանդես է գալիս որպես նվիրատու՝ հերոսին տալով իր մազը: Մազը կրակին տալով և կանչի բանաձևով ապահովվում է ծին օգնությունը հերոսին: Ձիու նվիրած մազը հայկական որոշ հեքիաթներում

օգտագործվում է որպես հրաշագործ միջոց, օրինակ՝ «Էս գյուղը դևի մոր թուքն է, գուգեր մեր ճամպեն կտրե, օր դևը մեզի վնասեր, տիա ինքն էլ օրտակ (բաղ) է դարձե, կլողա, դու յալես (բաշ) իրեք մազ պոկե, քցե գյուղի (իճ) մեջ»: Տղեն իրեք մազը քցեց գյուղի վրա, կարմունջ դարձավ, իրանք անցան» (ՀԺՀ, հ. IV, № 7): Մեկ այլ հեքիաթում իմաստուն ձին հերոսի լեզուն բացելու համար իր բաշից երեք մազ է տալիս փերուն, որպեսզի նա զցի բաժակով ջրի մեջ ու խմեցնի հերոսին, որ նրա լեզուն բացվի (Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 21, № 1(1)):

Հեքիաթների բազմաթիվ մոտիվներ կապված են **ոչխարի (խոյի)** հետ, որոնց մեջ ոչխարի գործառույթը բազմազան է: Որոշ հեքիաթներում ոչխարները եռագույն են՝ սև, կարմիր ու սպիտակ և գտնվում են այս ու այն աշխարհը իրար հետ կապող հորի հատակում: Սա համապատասխանում է Տիեզերական ծառի միջնամասին, որտեղ սովորաբար տեղակայված է ոչխարը: Ըստ հեքիաթի՝ ոչխարների գույները խորհրդանշում են նրանց պատկանելությունը լույս և մութ աշխարհներին (Հանս-Յորգ Ուֆերի դասակարգման՝ ATU 301 տիպ): Խոյը միայն հեքիաթի հերոսին լույս աշխարհի դուրս բերելու գործառույթ չի կատարում: Բազմաթիվ հրաշապատում հեքիաթներում պալատը, որտեղ գտնվում է անմահական խնձորը կամ հազարան բլբուլը, հսկում են առյուծն ու խոյը, այսինքն՝ նրանք այս և այլ աշխարհների սահմանային գոտու պահապաններն են:

Առյուծը աշխարհի շատ ժողովուրդների առասպելաբանությունում և բանահյուսության մեջ բարձրագույն աստվածային ուժի, հզորության, իշխանության և վեհության, ինչպես նաև արևի ու կրակի խորհրդանիշ է: Առյուծի կերպարի հետ են կապվում նաև խելքը, ազնվությունը, հոգատարությունը, արդարությունը, հպարտությունը, քաջությունը, էգ առյուծը և՛ մայրության խորհրդանիշ է, և՛ բազմաթիվ մայր-աստվածությունների հատկանիշ⁶: Եվ պատահական չէ, որ հայ ժողովրդական հեքիաթներում հիվանդին (թագավոր, թագավորի աղջիկ և այլն) բուժելու համար հեքիաթի հերոսին ուղարկում են առյուծի կաթ բերելու (ATU 611 տիպի հեքիաթախումբ): Առյուծն իր կաթը նվիրաբերում է երախտագիտությունից դրդված: Իսկ երախտագետ առյուծը հերոսին ոչ միայն կաթ է տալիս, այլև՝ խորհուրդ, թե կաթը ինչ ձևով տանի (Կարս, № 7(7)):

Հայկական մի շարք հեքիաթներում (ATU 511 և ATU 511A տիպերի ՀԺՀ, հ. XVII, № 18, ՀԺՀ, հ. XVIII, № 6, ՀԺՀ, հ. XIV, № 16) նվիրատու և խորհրդատու է դառնում **կովը** կամ **եզը**: Կովը խորթ մոր կողմից ճնշված

⁶ Соколов М., Лев, //Мифы народов мира, т. II, Москва, изд-во “Советская энциклопедия”, 1988, с. 40-43.

երեխաների մեռած մոր հոգին է վերամարմնավորում և նրանց օգնում է նույնիսկ մորթվելուց հետո (գտնում թաքցրած եղջյուրների և ոսկորների միջոցով:

Հանգուցյալների վերամարմնավորված հոգին դրսևորվում է բազմաթիվ հեքիաթներում: «Թագավորի պզտի տղեն» (Կարս, № 2(2)) հեքիաթում խորհրդատուի դերում հանդես է գալիս **աղվեսը**, որը երախտագետ ծերունու վերամարմնավորված հոգին է. աղվեսն ուղեկցում է հերոսին մինչև հեքիաթի հանգուցալուծումը: Այս հեքիաթում աղվեսը ոչ միայն հերոսին մատնացույց է անում հազարան բլբուլի, անմահական ջրի ու անմահական խնձորի գտնվելու վայրը, այլև ամբողջ հեքիաթի ընթացքում պահապան հրեշտակի նման հսկում է նրա գործողությունները, ինչպես նաև ջրհորի միջոցով ապահովում հերոսի՝ անդրաշխարհից այսրաշխարհ անցումը: Մեկ այլ հեքիաթում դևերի կողմից գերեվարված աղջիկը կերպարանափոխված **ջեյրանի** տեսքով (ՀԺՀ, հ. I, № 10) հեքիաթի գլխավոր հերոսին՝ արքայազնին հրապուրում է դեպի անդրաշխարհի մուտք՝ քարայր և խորհուրդ է տալիս՝ ինչպես հանել կպրե կարատում թաքցված թուրը՝ դևին սպանելու համար:

Կերպարանափոխությամբ են հանդես գալիս նաև **օձերը, ձկները, գորտերը**, որոնք կապված են ստորերկրայքի հետ: Օձ-երիտասարդը (ՀԱԲ, հ. 21, , № 13(13), (Կարս, № 21(21)), ձուկ տղան (Կարս, № 15(15)), գորտ-աղջիկը (ՀԺՀ XI, № 16, ՀԺՀ, Ղանալանյան, № 9) և մի շարք այլ հեքիաթներում կենդանիների այս խումբը հերոսին օգնում է ի նշան երախտագիտության նվեր մատուցելով (մատանի, թեփուկ) և խորհուրդներ տալով:

Հեքիաթի հերոսի ճանապարհին հայտնվում են ամենատարբեր կենդանիներ, տարբեր իրավիճակներում, որոնց նա լավություն է անում: Երախտապարտ կենդանիները, փոխհատուցելով նրա արած լավությունը, օգնում են հերոսին դուրս գալ անելանելի վիճակներից: Հերոսին երբեմն օգնության են հասնում **մրջյունները, մժեղները և մեղուները**, որոնք, ի նշան երախտագիտության, հերոսին են տալիս եղունգը, ոտքը կամ թևը (հրաշագործ առարկաներ), որ նեղության մեջ ընկնելիս օգնության հասնեն (Կարս, № 8(8), ՀԺՀ, հ. I, № 18, ՀԺՀ, հ. I, № 21):

Թռչունը նույնպես կապված է մարդու տոտեմական պատկերացումների հետ: Թռչուն-նախնին հնուց ի վեր իր դրսևորումն է գտել հայ ժողովրդական հեքիաթներում: Հեքիաթի հերոսի մեռած նախնու հոգին թռչնի կերպարանքով⁷ հայտնվում է նրա ճանապարհին՝ երազում թե

⁷ Աբեղյան Մ., 1975, նշվ. աշխ., էջ 17:

արթմնի, անդրաշխարհում թե այսրաշխարհում, խոշորամարմին թե փոքրամարմին: Հայկական հեքիաթներում հանդես եկող թռչունների բազմազանության մեջ հիմնականում կարելի է առնձնացնել հետևյալ տիպերը. ա) թռչուններ (բլբուլ (տոխակ), աղավնի), որոնք օգնում են հերոսին վերակենդանանալու կամ վերականգնելու մարմնի վնասված մասերը, բ) թռչուններ (ղուշ, զմրուտ զուշ, արծիվ), որոնք իրականացնում են հերոսի տեղափոխությունը անդրաշխարհից այսրաշխարհի և ընդհակառակը, գ) երախտապարտ թռչուններ (աղավնի (դոխ), բլբուլ, բազե), որոնց խորհուրդների օգնությամբ հերոսը վերահսկում է իր հետագա քայլերը՝ խուսափելով վերահաս վտանգից, դ) թռչուններ (աղավնի, զուշ, վայրի սագ, թութակ, դովլատ զուշ), որոնք որոշում են հերոսի ճակատագիրը կամ օժտում են շնորհներով, ե) հերոսի կերպարանափոխություն թռչունի (աղավնի, զուշ, բլբուլ) կամ հակառակը:

ATU 550 հեքիաթների տիպի հայկական հեքիաթախմբում ախոյանի (վնասատուի) կողմից վնասված, երբեմն մեռած կամ քար դարձած, մոտալուտ վտանգին ենթակա հերոսը կարիք ունի միջամտության. վրա է հասնում նվիրատու և խորհրդատու թռչունը: Հատկապես խաթարված մարմնի մասերի վերականգնման գործընթացը հաճախ իրագործվում է թռչնային խորհրդով ու նվիրատվությամբ: Հրաշապատում հեքիաթի հերոսը տեղափոխվում կամ հասցվում է փնտրվող օբյեկտի գտնվելու տեղը, որը սովորաբար այլ տարածությունում է՝ անդրաշխարհում: Հեքիաթում հերոսի տեղափոխությունը դեպի անդրաշխարհի կատարվում է տարբեր միջոցներով: Հայկական հեքիաթներում որպես տեղափոխող է հանդես գալիս առասպելական չափեր ունեցող «ղուշը», որը օգնում է հերոսին՝ ի նշան երախտագիտության:

Հերոսի մեռած նախնու հոգին հայկական հեքիաթներում հանդիպում է նաև **աղավնու** կերպարանքով:

Հեքիաթի հերոսի և աղավնակերպ մեռած նախնու հոգու հանդիպումը սովորաբար տեղի է ունենում դաշտում կամ անտառում ծառի տակ հանգստանալիս կամ քնած ժամանակ՝ երազում:

1.4. Բնաշխարհը ներկայացնող օգնականներ

Մարդուն շրջապատող բնաշխարհը ներկայացնող անտառը, ծառը, աղբյուրը, գետը, ծովը, լճակը, սարը, ժայռը, քարայրը, քարը, գանգը, միաժամանակ լինելով կապող օղակ անդրաշխարհի հետ, հաճախ հեքիաթի հերոսի համար դառնում են անձնավորված նվիրատուներ կամ խորհրդատուներ: Աղբյուր→գետ→ծով ջրային համակարգը հայկական հեքիաթներում ծառայում է որպես միջոց հերոսի կապն անդրաշխարհի

հետ ապահովելու համար: Աղբյուրից է դուրս գալիս անդրաշխարհի դերվիշն իր շներով (ՀԺՀ, հ. XIV, № 11), գետի միջոցով է հերոսն անցում կատարում անդրաշխարհից այսրաշխարհ (ՀԱԲ, հ. 25, № 10(10)), ծովի միջոցով է հերոսը ստանում բազմատեսակ հրաշագործ առարկաներ (ՀԺՀ, հ. I, № 23) և այլն:

Հաճախ հերոսի գործողություններին նպաստում են նաև անտառը և ծառը: Անտառում գտնված ցանկացած հրաշագործ առարկա կարող է դիտարկվել որպես նվիրատվություն՝ անտառի կողմից: Ծառը այս աշխարհի հետ ստորերկրայքի կապն է խորհրդանշում: Հեքիաթներում հերոսին անդրաշխարհի հետ կապող օղակ են հանդես գալիս նաև ծառից ածանցված կոճղը, մահակը, տերևը, ինչպես նաև պտուղները (ՀԺՀ, հ. IV, № 7, ՀԺՀ, հ. V, № 6, ՀԺՀ, հ. VII, № 178), որոնք նույնպես երբեմն ներկայանում են որպես նվիրատուներ և խորհրդատուներ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՔԻԱԹԻ ՀԵՐՈՍԻ ԳԵՐԲՆԱԿԱՆ ՕԳՆԱԿԱՆՆԵՐ

2.1. Գերբնական հատկություններով օժտված գործող անձինք

Հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթներում հեքիաթի հերոսին ուղեկցող գերբնական հատկություններով օժտված գործող անձինք բազմաթիվ են, թեև նրանք բոլորն էլ ունեն միևնույն գործառույթը՝ օգնել հերոսին դուրս գալ իր վերջնական նպատակին հասնելու ճանապարհին ծառայած դժվարագույն իրավիճակներից. այս գործող անձինք մուտք են գործում հեքիաթի սյուժե այն ժամանակ, երբ ինչ-որ խնդիրներ հաղթահարելու համար հերոսին օգնել ի զորու չեն հրաշագործ ծին, թռչունը (արծիվ, զմրույթ դուռ և այլն) կամ հրաշագործ առարկաները (կախարդական սփռոց, գլխարկ, մոմակալ և այլն): Այդ գործող անձինք երբեմն հենց իրենք են իրենց դնում հերոսի տրամադրության տակ՝ հանդիպելով նրա ճանապարհին և առաջարկելով իրենց ծառայությունները, երբեմն էլ միջնորդավորված ծառայություն են մատուցում՝ որպես նվիրատուի հովանավորյալներ. «Իսազօլի, աստված քրզհետ, սա դուդինի (թռչուն) օխնանքն էր, վրեր մենք քեզ միար տյուս եկանք» (ՀԱԲ, հ. 21, № 5(5)): Նրանք կարող են լինել հսկայական ֆիզիկական ուժի տեր, արագընթաց, շատ ուտող, շատ խմող, անհավանական լսողությամբ, առարկաները փոխատեղելու հատկությամբ օժտված և այլն: Սովորաբար օգնական ուղեկիցներն իրենց գերբնական հատկությունները ստորադասում են գլխավոր հերոսի կարողություններին, որոնք բանաձևվում են այսպես. «Հունար (շնորհք), հունար Ավչու տղինն ա,

որ գնաց բերուց Շամ-չրաղը (լույս տվող մորթի), բերուց ֆլի (փիղ) օսկոռը, բերուց դրախտական ծառը» (ՀԺՀ, հ. I, № 23): Խորն են գերբնական հատկություններով օժտված մարդկանց ծագումնաբանական արմատները, նրանց գործառույթներում կարելի է նկատել առասպելական հերոսների վարքագծին բնորոշ առանձնահատկություններ (Տորք Անգեղյա, Հերմես և այլն):

Սովորաբար հերոսի ճանապարհին իրենց ծառայությունն են առաջարկում գերբնական հատկություններով օժտված մի քանի օգնականներ: Ըստ Աարնե-Թոմփսոն-Ութերի հեքիաթների տիպերի և մոտիվների միջազգային դասակարգման՝ ATU 513, ATU 513A, ATU 513B թվահամարներին համապատասխանող հայկական հեքիաթներում այս գործող անձինք հեքիաթի սյուժեի զարգացման ընթացքում ինչպես անսպասելիորեն հայտնվում են, այնպես էլ հեռանում են՝ իրենց ծառայությունները հերոսին մատուցելուց հետո: Կախված այն բանից, թե ինչ կարգի փորձությունների պետք է հանդիպի հերոսը, հեքիաթի սյուժե են ներգրավվում որոշակի քանակի և համապատասխան գերբնական ընդունակություններով օժտված գործող անձինք: Այդպիսի օգնական-ուղեկիցները կարող են լինել հինգը, չորսը, երեքը կամ երկուսը (ՀԺՀ I, № 23, ՀԺՀ VI, № 2, ՀԺՀ I, № 10):

2.2. Հրաշագործ առարկաներ

Հրաշագործ հատկություններով առարկաների հայտնվելը հրաշապատում հեքիաթներում պատմականորեն կապված է նախնադարյան հավատալիքների հետ: Մարդը որոշ առարկաների վերագրում էր գերբնական հատկություններ և դրանք դարձնում պաշտամունքի առարկա, ֆետիշացնում: Հայկական հեքիաթներում հանդես եկող առարկաները դասակարգել ենք ըստ նրանց հրաշագործ հատկությունների և կիրառությունների: Այդ առարկաները. ա) ցույց են տալիս և ասում՝ ինչ է կատարվում այսրաշխարհում (հայելի, կախարդական գիրք, մատանի), բ) հերոսին կարճ ժամանակում տեղափոխում են մեծ տարածություններ (գորգ, կարպետ, խնոցի, կարաս, թաշկինակ), գ) բուժում են կամ վերակենդանացնում (անմահական ջուր, խնձոր, առյուծի կաթ, փետուր, յափնջի, ճիպոտ, մատանի), դ) հերոսին դարձնում են անտեսանելի (գլխարկ, շալվար, ասեղ), ե) առարկաներ, որոնց միջոցով հերոսը օգնություն է ստանում (մագ, փետուր, բուրդ, եղունգ, մատանի և այլն), զ) երաժշտական գործիքներ, որոնց նվագով հերոսը խուսափում է թունավորվելուց կամ շեղում հակառակորդի ուշադրությունը (շվի, դուդուկ, զուռնա, եղջյուր և այլն), է) կենցաղային

առարկաներ, որոնք կերակրելու գործառույթ են իրականացնում (սփռոց, սինի), ը) առարկաներ, որոնց միջոցով հերոսի առաջ հայտնվում են ցանկությունները կատարող ոգիներ (մատանի, մոմակալ, աշտանակ, կանթեղ և այլն), թ) առարկաներ որոնցով հարվածվելու դեպքում կամ որն ուտելով մարդը ժամանակավորապես կերպարանափոխվում է և կրկին վերադառնում նախկին տեսքին (մտրակ, եշիլ-չիբուխ, տանձ, խնձոր և այլն), ժ) առարկաներ, որոնք կարող են ամբողջ զորք կոտորել (թուր, դաշույն, մահակ և այլն), ժա) առարկաներ, որոնց միջոցով հերոսը, անանցանելի ճանապարհ ստեղծելով, խուսափում է հակառակորդի հետապնդումից (սանր, ասեղ, աղ և այլն), ժբ) առարկաներ, որոնց ճշմարտությունը պատմելով, հերոսն ապացուցում է իր արդարացիությունը (տիկնիկ, թաս, նուռ, հայելի և այլն), ժգ) առարկաներ, որոնք երբեք չեն դատարկվում կամ չեն կորցնում ամբողջականությունը (քսակ, պղնձե թաս, կուժ, հաց և այլն), ժդ) խորհրդատու առարկաներ (շապիկ, տերև): Հրաշագործ առարկաները կարող են լինել ինչպես փնտրվող (անմահական ջուր, խնձոր, հազարան բլբուլ և այլն), այնպես էլ նվիրատվությամբ հերոսի տրամադրության տակ դրվող:

Հայկական հեքիաթներում առանձնահատուկ տեղ է գրավում **մատանին**. այն հանդես է գալիս ինչպես առանձին, այնպես էլ այլ հրաշագործ առարկաների հետ միաժամանակ, որոնք իրենց գործառույթներով լրացնում են մեկը մյուսին, և դրանց առանձին գործունեությունը, հնարավոր է, չճառայեցվի հերոսի նպատակներին: Իշխանության խորհրդանիշ մատանին որպես հրաշագործ առարկա հանդիպում է հայկական բազմաթիվ հրաշապատում հեքիաթներում. այն կարող է հերոսին տրվել ինչպես թագակիր անձի (թագավոր, արքայադուստր), այնպես էլ թագակիր կենդանու կամ թռչունի (օձ, ձուկ) կողմից: Թագակիր անձի կամ թագակիր կենդանու մատանին հերոսին է փոխանցում նրանց զորությունն ու իմաստությունը: Մատանին կարող է տրվել կա՛մ ժառանգաբար, կա՛մ որպես երախտագիտություն, կա՛մ այլ թագավորի (երբեմն անդրաշխարհի թագավորի) կողմից: Հայկական հեքիաթներում օձերի թագավորը հրաշագործ մատանին պահում է լեզվի տակ և հերոսին է տալիս ի նշան երախտագիտության: Այս հեքիաթախումբը (ՀԱԲ, հ. 14, № 4(12), ՀԱԲ, հ. 19, № 12(12), ՀԱԲ, հ. 25, № 12(12), Կարս, № 20(20), ՀժՀ, հ. VII, № 23) ըստ Աարնե-Թոմփսոն-Ութերի հեքիաթների տիպերի միջազգային դասակարգման՝ համապատասխանում է ATU 560 տիպին: Որոշ հեքիաթներում հերոսն ինքն էլ է օձի խորհրդով մատանին պահում լեզվի տակ, մատանին գործողության մեջ դնելու համար հերոսն այն հանում է լեզվի տակից և լիզում. դուրս են գալիս երկու

արաբ և կատարում հերոսի ցանկությունը: Մատանին մատը դնելով, ակը պտտելով կամ փայլեցնելով՝ հերոսի առջև հայտնվում են երկու (քառասուն) արաբ, քառասուն դերվիշ կամ պարզապես երկու հոգի, որոնք մարմնավորում են տարբեր ոգիներ անդրաշխարհից և կատարում նրա ցանկությունները:

Անդրաշխարհի ոգիները հայկական հեքիաթներում հերոսին օգնության են հասնում նաև այլ հրաշագործ առարկաների միջոցով (**մոմակալ, կանթեղ**): Այս տիպի հեքիաթները համապատասխանում են Աարնե-Թոմփսոն-Ութերի հեքիաթների տիպերի միջազգային դասակարգման ATU 561 տիպին: Ըստ գործառույթների խմբավորված հրաշագործ առարկաները հերոսի տրամադրության տակ են դրվում կա՛մ առանձին, կա՛մ խմբով՝ պայմանավորված հերոսին առաջադրված խնդրի դժվարությամբ: Այդարատի «Կոմբալ տու...» հեքիաթում հերոսը խորամանկությամբ ձեռք է բերում մի հրաշագործ **քար**, որը լեզվի տակ դնելով՝ սփռոցի վրա հայտնվում էին տարբեր ուտելիքներ կամ կատարվում էր նրա որևէ այլ ցանկություն: Խորամանկ հերոսը հրաշագործ քարը այլ հրաշագործ առարկաների (**ձեռնափայտ, դաշույն, յափնջի**) հետ փոխանակելով և դարձյալ քարը հետ ստանալով մեծ ունեցվածքի տեր է դառնում: Այս հեքիաթում ձեռնափայտը և դաշույնն ունեն ջարդելու, փշրելու, զորք կոտորելու, իսկ յափնջին մեռածին վերակենդանացնելու հատկություն: Որոշ հեքիաթներում հերոսը հրաշագործ մի քանի առարկա ստանում է միանգամից կա՛մ ժառանգաբար (**քսակ, դուդուկ**), կա՛մ խորհրդատվությամբ (**պղնձե թաս, սփռոց, թուր**), կա՛մ խորամանկությամբ (**գլխարկ, սփռոց, բանալի**):

Իր ծիսական նշանակությամբ մի շարք հայկական հեքիաթներ է մուտք գործել և հանդես եկել որպես հերոսի օգնական նաև **Տիկնիկը**:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱԶՆԵՐՈՒՄ

Հեքիաթը բանավոր ավանդության այն ժանրերից է, որտեղ գլխավոր հերոսի գործողությունները երբեմն ուղեկցվում են երազներով: Երազատեսությունն առեղծվածային երևույթ է: Համարվում է, որ քնած ժամանակ մարդու հոգին անջատվում է մարմնից և շրջագայում տարածության մեջ, հանդիպում մեռած նախնիների հոգիներին, վերցնում օգտակար տեղեկատվությունը, որի ընկալումը թույլ է տալիս իրական կյանքում ընդունել ճիշտ ու նպատակահարմար որոշումներ: Երազներում հերոսին տրվող խորհրդատվությամբ և նվիրատվությամբ պայմա-

նավորված՝ մեր ուսումնասիրած հայ ժողովրդական հեքիաթներում հանդես են գալիս խորհուրդների և նվերների կիրառման միջոցների հետևյալ տարատեսակները. ա) արթմնի ուղևորություն երազում տեսած հարսնացուին (փեսացուին) փնտրելու նպատակով (ՀԱԲ, հ. 25, № 37(37), ՀԱԲ, հ. 21, № 10(10), ՀԱԲ, հ. 25, № 3(3), ՀԱԲ, հ. 25, № 25(25)), բ) խորհուրդ՝ ինչպես ձեռք բերել որևէ հրաշագործ կենդանի կամ իր (ՀժՀ, հ. 1, № 1, ՀժՀ, հ. XV, № 51), գ) մեռածին, քար դարձածին վերակենդանացնելու, անբուժելի որևէ հիվանդությունից բուժելու կամ մարմնի մասերը վերականգնելու միջոց (ՀժՀ, հ. 1, № 15, ՀժՀ I, № 20, ՀժՀ, հ. 1, № 14, Կարս, № 26(26), ՀժՀ, հ. VIII, № 22, Կարս, № 33(33), Կարս, № 10(10)), դ) տեղեկատվություն և խորհուրդ հերոսին՝ անցնելիք ճանապարհի, սպասվելիք վտանգների և դրանցից խուսափելու մասին (ՀժՀ, հ. 1, № 20, ՀժՀ, հ. VIII, № 22, ՀԱԲ. հ. 21, № 4(4), Կարս, № 10(10), ՀժՀ, հ. XIV, № 19, ՀժՀ, հ. XVII, № 4), ե) քնած ժամանակ հերոսի տեղափոխություն (ՀժՀ, հ. XIV, № 1, ՀժՀ, հ. XIV, № 24), զ) երազում հերոսին առաջարկված ծառայություն (ՀԱԲ, հ. 25, № 74(74)), է) նվիրատվություն հերոսին քնած ժամանակ (Կարս, № 13(13)), ը) երազահանության շնորհը որպես հերոսի գործողությունների նպաստող միջոց (ՀԱԲ, հ. 21, № 18(18), ՀԱԲ, հ. 21, № 33(33), ՀԱԲ, հ. 21, № 20(20), ՀԱԲ, հ. 25, № 40(40), ՀԱԲ, հ. 25, № 61(61)), թ) խորհուրդ՝ որտեղ որոնել բախտը (ՀԱԲ 25, № 44(44)):

Պատմական Հայաստանի գրեթե բոլոր պատմաագագրական տարածաշրջանների հեքիաթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ի թիվս գործողությունների ընթացքում հանդիպած բազմատեսակ խորհրդատուների և նվիրատուների (աստված, հրեշտակ, թագավոր, ծերունի, պառավ, կենդանի, թռչուն և այլն)՝ իր գերագույն նպատակին հասնելու համար հեքիաթի գլխավոր հերոսը օգտվում է նաև երազում կատարված խորհրդատվություններից և նվիրատվություններից:

ԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական հեքիաթի հերոսի գործողություններն ընթանում են բազմաթիվ և բազմագործառույթ նվիրատուների, խորհրդատուների, գերբնական հատկություններով օժտված գործող անձանց ու հրաշագործ առարկաների (հեքիաթի հերոսի օգնականներ) ուղեկցությամբ: Քննության առնելով, համեմատելով հեքիաթի հերոսի

օգնականների տիպերն ու գործառույթները՝ եկել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Հայ ժողովրդական հեքիաթների տպագիր ժառանգության քննությունը ցույց է տալիս, որ հեքիաթի գլխավոր հերոսին շրջապատում է բարի ու չար ուժերի մի ողջ համակարգ, որում դրանց հակամարտությունն ու պայքարը միմյանց դեմ իրագործվում է հերոսի միջոցով: Նա ենթարկվում է նախնական, լրացուցիչ և հիմնական փորձությունների, որոնց հաղթահարումն իրականացվում է բազմաթիվ և բազմաբնույթ օգնականների միջամտությամբ: Ըստ հեքիաթի հերոսի օգնականների դասակարգման՝ նվիրատուներն ու խորհրդատուները ներկայացվել են համապատասխան ենթախմբերով (մարդ և մարդակերպ նվիրատուներ ու խորհրդատուներ, կենդանի և թռչուն նվիրատուներ ու խորհրդատուներ, բնաշխարհը ներկայացնող նվիրատուներ ու խորհրդատուներ, գերբնական հատկություններով օժտված գործող անձինք և հրաշագործ առարկաներ), որոնց երկրորդ աստիճանի դասակարգմամբ հնարավորություն է ընձեռվել կատարել տիպահամեմատական քննություն:

2. Ուսումնասիրությամբ վեր են հանվել մարդ և մարդակերպ նվիրատուների ու խորհրդատուների որոշ տիպերի ընդհանրությունները: Աստված, ծերունին, հրեշտակը, դերվիշը, հեքիաթում հանդես գալով տարբեր հանգամանքներում և տարբեր կերպ, երբեմն ունեն միևնույն գործառույթը (անժառանգ ամուսիններին ժառանգ տալ, հերոսին ուղղորդել խորհուրդներով, ձի կամ ասպազեն նվիրել, շնորհներով օժտել, փորձության ենթարկել, պատժել և այլն): Հեքիաթի հերոսին ամենուրեք ուղեկցող աստվածը մշտապես միջամտում է նրա գործողություններին՝ ուղարկելով բազմաբնույթ նվիրատուներ, խորհրդատուներ և այլ օգնականներ: Ընդհանրություններն առկա են նաև պառավ և մայր համադրության մեջ (հերոսի ճանապարհին հանդիպած պառավը երբեմն ստանձնում է հերոսի մոր պարտականությունները): Քննության առնված նվիրատուների և խորհրդատուների շարքը լրացնում են թագավորի պալատականները, հասարակ ծագում ունեցող աղջիկը, որսորդը, ջրաղացպանը, նախրապանը, հովիվը և այլ գործող անձինք, որոնք իրենց գործառույթներով նպաստում են հերոսի գործողություններին:

3. Կապված մարդու տոտեմական պատկերացումների հետ՝ հեքիաթ մուտք գործած կենդանիները և թռչունները (երբեմն բույսերը) հանդես են գալիս որպես հերոսի մեռած նախնու վերամարմնավորում, հանդես են գալիս կերպարանափոխությամբ, ունեն մարդկային հատկանիշներ, գիտեն հերոսի անցնելիք ճանապարհի, նրա առաջ ծառացող վտանգների մասին և իրենց խորհուրդներով ուղղորդում են նրան:

Ի թիվս խոշորամարմին կենդանիների և թռչունների (ծի,արծիվ, խոյ և այլն) բազմաթիվ գործառույթների, նրանք հանդես են գալիս նաև որպես կապող օղակ այս և այլ (անդրաշխարհ) աշխարհների միջև, դառնում հերոսին տեղափոխող գլխավոր միջոցներից մեկը:

Անկախ չափերից՝ կենդանիները և թռչունները հանդես են գալիս որպես հեքիաթի հերոսի նվիրատու և խորհրդատու՝ երախտագիտությունից դրդված՝ ի պատասխան նրա արած լավությունների (կերակրել, չտրորել, ձագերին փրկել, վիրավորին բուժել և այլն): Երախտագետ կենդանին կամ թռչունը անդրաշխարհի հետ որպես կապող օղակ լինելուց զատ կարող է կանչի բանաձևով մոտենալ հերոսին (հերոսի կողմից փետուրը, եղունգը, բուրդը, մազը կրակին տալու միջոցով) և նրան դուրս բերել անելանի իրավիճակներից:

4. Ուսումնասիրությամբ վեր են հանվել հայ ժողովրդական հեքիաթներին բնորոշ բնաշխարհը ներկայացնող առարկաների և համակարգերի (քար, քարայր, սար, ծով, աղբյուր, անտառ, ծառ, տերև, կոճղ և այլն)՝ որպես նվիրատու և խորհրդատու հանդես գալը, որոնք խորհրդանշում են հնագույն մոռացված իրողություններ և մթագնված կերպով պահպանում են նախնական մտածողության ու ծիսաստվորությամբ հավատալիքների հետքեր:

5. Հայկական հեքիաթի գլխավոր հերոսի ճանապարհին աստծո միջամտությամբ երբեմն հայտնվում են գերբնական հատկություններով (արտակարգ լսողություն, տեսողություն, ֆիզիկական ուժ և այլն) օժտված գործող անձինք և առաջարկում իրենց ծառայությունները, երբ հերոսի մյուս օգնականներն ի գորու չեն օգնելու նրան:

Հեքիաթի հերոսի գերագույն նպատակին հասնելու համար առանձնահատուկ նշանակություն ունեն տարբեր նվիրատուների կողմից տրված, նախնական հավատալիքների հետ կապված և ֆետիշացված հրաշագործ առարկաները: Բացահայտված են այդ առարկաների հրաշագործ հատկությունները, որոնք հերոսի համար ծառայում են որպես տեղեկություններ տալու, մեծ տարածություններ տեղափոխելու, վերակենդանացնելու, բուժելու, անտեսանելի դարձնելու, իրավացիությունն ապացուցելու և այլ միջոցներ:

6. Ի թիվս գործողությունների ընթացքում հանդիպած բազմատեսակ խորհրդատուների և նվիրատուների՝ իր գերագույն նպատակին հասնելու համար հեքիաթի գլխավոր հերոսը օգտվում է նաև երազում կատարված խորհրդատվություններից և նվիրատվություններից: Քունը դիտարկվում է որպես մարդու ժամանակավոր մահ, որի ընթացքում հերոսի հոգին հանդիպում է իր մեռած նախնու հոգու, աստծո կամ աստծո միջնորդի

հետ, որոնք, իմանալով հերոսի անցնելիք ճանապարհի ու դժվարությունները հաղթահարելու միջոցների մասին, իրենց խորհուրդներով ու երբեմն երազում նվեր մատուցելով՝ նպաստում են հերոսի գործողություններին:

7. Հայկական հեքիաթի գլխավոր հերոսի օգնականների դասակարգմամբ առանձնացնելով նրանց տիպերը՝ քննության են առվել նրանց գործառույթները և ընտրվել հայկական հեքիաթների տպագիր ժառանգության այն հեքիաթները, որոնցում առկա են խնդրո առարկան պատկերավոր կերպով ներկայացնող գործող անձինք:

Քննարկվել են ուսումնասիրության ենթարկված հայկական հեքիաթների տիպերն ու մոտիվները ըստ Աարնե-Թոմփսոն-Ռիթերի՝ հեքիաթների տիպերի և մոտիվների միջազգային դասակարգման և տրվել որոշ հեքիաթների տիպերի ու մոտիվների համարժեք տարբերակները:

Ուսումնասիրության քանակական վերլուծությամբ ընտրված հայկական հեքիաթների տպագիր ժառանգության մեր կողմից ընտրված շուրջ 220 հեքիաթներում առավելապես հանդես են գալիս խորհրդատուները՝ պայմանավորված այն հանգամանքով, որ խորհրդատվությունը ոչ միշտ է ուղեկցվում նվիրատվությամբ, այսինքն՝ գլխավոր հերոսը երբեմն իր նպատակակետին կարողանում է հասնել միայն խորհրդատվությամբ՝ առանց հրաշագործ առարկաների առկայության:

ՀԱՎԵԼՎԱԾ I. ՀԵՔԻԱԹԻ ՀԵՐՈՍԻ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ՏԻՊԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Առանձնացնելով հեքիաթի գլխավոր հերոսի գործողություններին նպաստող, ամենաբնորոշ առանձնահատկություններով նվիրատուների ու խորհրդատուների հիմնական տիպերը՝ աղյուսակով տրվել են յուրաքանչյուր նվիրատուի կամ խորհրդատուի գործառույթը (գործառույթները), հեքիաթը, տարածաշրջանը, հեքիաթի ժողովածուն և համարը՝ ժողովածուում: Աղյուսակում առանձնացվել են մարդ և մարդակերպ, կենդանի և թռչուն, ինչպես նաև բնաշխարհը ներկայացնող նվիրատուներն ու խորհրդատուները:

ՀԱՎԵԼՎԱԾ II. ՀԵՔԻԱԹԻ ՀԵՐՈՍԻ ԳԵՐԲՆԱԿԱՆ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հայկական հեքիաթներում գլխավոր հերոսը նվիրատուներից և խորհրդատուներից զատ, ունի նաև գերբնական Աղյուսակով տրված են

գերբնական հատկություններով օժտված գործող անձանց և հրաշագործ առարկաների տիպերը, տրված է յուրաքանչյուր տիպի գործառույթը (գործառույթները), հեքիաթը, տարածաշրջանը, հեքիաթի ժողովածուն և համարը ժողովածուում:

ՀԱՎԵԼՎԱԾ III. ՀԵՔԻԱԹԻ ՀԵՐՈՍԻ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ուսումնասիրության համար ընտրված 220 հեքիաթների՝ ըստ տիպերի և գործառույթների դասակարգված գլխավոր հերոսի օգնականների քանակական վերլուծության արդյունքներն արտացոլված են աղյուսակում: Աղյուսակում բերված են մարդ և մարդակերպ կենդանի և թռչուն, բնաշխարհը ներկայացնող խորհրդատուների ու նվիրատուների, գերբնական հատկություններով օժտված օգնականների, հրաշագործ առարկաների, հրաշագործ կենդանիների առկայությունն ընտրված հեքիաթներում: Հեքիաթի հերոսի օգնականների ընդհանուր թիվը (605) ցույց է տալիս, որ ընտրված հեքիաթներում հանդիպում են մեկ կամ ավելի օգնականներ (մինչև 16):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Գերբնական հատկություններով օժտված գործող անձինք որպես հեքիաթի հերոսի օգնական, «Ոսկե դիվան» հեքիաթագիտական հանդես, պրակ 5, Երևան, 2014-2015, էջ 79-85:

2. Նվիրատուն և խորհրդատուն Կարսի հրաշապատում հեքիաթներում, Հայ ժողովրդական մշակույթ- XVI «Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում» Դերենիկ Վարդումյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 426-433:

3. Նվիրատուն և խորհրդատուն Տավուշի հեքիաթներում, Հայ գիտական բարբառագիտության 100-ամյակի գիտաժողովի նյութեր, Իջևան, ԵՊՀ հրատ., 2015, էջ 223-235:

4. Խորհրդատու և նվիրատու թռչունը Կարսի հրաշապատում հեքիաթներում, Գիտական աշխատություններ-XIX, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2016, էջ 186-192:

5. Խորհրդատվությունը և նվիրատվությունը երազներում (Ըստ հայ ժողովրդական հեքիաթների), Պատմաբանասիրական հանդես, № 2(205), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, էջ 163-172:

6. Նվիրատու և խորհրդատու կենդանիները հայ ժողովրդական հեքիաթներում, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, հ. 1, Հայ ժողովրդական մշակույթ- XVII, «Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, էջ 446-457:

Ատենախոսի համահեղինակությամբ հրատարակվել է երկու գիրք.

1. Կարս. հայոց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ **Հարությունյան Ա., Վարդանյան Ա., Խենյան Է., Ղոեջյան Լ., Խենյան Մ.**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. 2013, 752 էջ:

2. Մոկս. հայոց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ **Հարությունյան Ա., Խենյան Է., Խենյան Մ., Պողոսյան Ա.**, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. 2015, 708 էջ:

Хемчян Марине Гайковна

ДАРИТЕЛЬ И СОВЕТЧИК В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ (ТИПО-СРАВНИТЕЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ)

**Автореферат диссертации на соискание ученой степени кандидата
филологических наук по специальности 10.01.05 “Фольклор”.**

**Защита диссертации состоится 6 июля 2018 года в 12:30 часов на заседании
специализированного совета ВАК 003 по специальности
“Литературоведение” при Институте литературы имени М. Абегамян НАН
РА по адресу: г. Ереван ул. Григора Лусаворича 15.**

Диссертация посвящена типологическому исследованию дарителей, советчиков, полумифологических, обладающих сверхъестественными свойствами спутников и чудотворных предметов (далее помощники), содействующие и способствующие действиям главного героя сказки.

Предмет исследования - материал сосуществующих сказок всех историко-этнографических регионов Исторической Армении (Айрарат, Ширак, Арцах, Утик, Сюник, Гугарк, Алашкерт, Маназкерт, Багеш, Муш, Харк, Тарон, Сасун, Ван-Васпуракан, Мокс, Карс, Карадах, Тавуш и т.д.), опубликованный в томах серий “Армянские народные сказки”, “Армянская этнография и фольклор” и в фольклорных сборниках разных регионов.

Цель исследования - сделать типологическое исследование помощников героя опубликованных армянских сказок.

В этом смысле перед нами были поставлены следующие задачи:

- а) рассмотреть и представить всю систему помощников героя сказки;
- б) выявить их особенности и роль в ходе развития сюжета сказки;

в) классифицировать помощников героя сказки по их функциям и типам;
г) выявить ритуально-религиозные и мифологические истоки помощников героя сказки;

д) представить параллели мотивов, относящиеся помощникам героя сказки по международной классификации типов сказок Аарне-Томпсон-Утера;

е) дать количественную картину помощников героя сказки в армянских опубликованных сказках, чем и делается целостным исследование функций дарителей и советчиков в армянских народных сказках.

Историко-сравнительным и аналитическим методом выбраны те сказки, в которых присутствуют помощники, необходимые для исследования. Помощники классифицировались, выделялись их типы, представлялись их функции. Иногда использован описательный метод. Методом количественного анализа дана картина частоты выступления помощников героя сказки, в пределах исследованных сказок, которая подробно представлена в приложениях диссертации.

Диссертация состоит из введения, трех глав, выводов, сокращений, списка источников и использованной литературы и трех приложений.

Во **введении** дана общая характеристика исследования, предмет, цель и задачи работы, актуальность, научная новизна, практическое значение, теоретическая и методологическая основа темы. Представлена также история армянского сказковедения, со своими приобретениями, краткая картина относящиеся теме исследований отечественных и зарубежных фольклористов, а также краткое содержание глав диссертации.

В первой главе, озаглавленной **“Дарители и советчики как образы, способствующие действиям героя сказки”**, помощники героя армянской сказки классифицировались двумя степенями (первый подраздел). Первой степенью нашей классификации совокупность помощников подразделена на пять подгрупп:

- 1) люди и антропоморфные дарители и советчики;
- 2) животные и птицы как дарители и советчики;
- 3) дарители и советчики представляющие природу;
- 4) действующие лица, обладающиеся сверхъестественными свойствами;
- 5) чудотворные предметы.

Второй степенью нашей классификации каждая подгруппа помощников героя сказки представлена по их функции, типам и формой действия.

Разными подразделами представлены человек и антропоморфные (бог, старик, дервиш, королевское лицо (король, королева, принц, принцесса), старуха, ангел и т.д.), животные (конь или лошадь, лев, овца или баран, корова или вол, лиса, лань, змея, лягушка, рыба, муравей, насекомые и т.д.) и птицы (орел, голубь, соловей, попугай, ласточка, воробей и т.д.), представляющие природу (море, река, родник, гора, пещера, камень, лес, дерево, пень, лист и т.д.) дарители и советчики. Даны особенности, и общности функций и типов дарителей и советчиков, а также их ритуально-религиозные и мифологические источники.

Во второй главе, озаглавленной “**Сверхъестественные помощники героя сказки**”, представлены многочисленные действующие лица, сверхъестественными свойствами, сопутствующие герою сказки (человек с огромной физической силой, быстродвижный человек, человек, который много пьет или ест, человек, у которого невероятный слух или зрение, человек, имеющий способность переместить предметы и т.д) (первый подраздел).

Во втором подразделе представлена система чудодействующих предметов (кольцо, ковер, скатерть, шапка, дудка, кукла, перо, волос, шерсть, яблоко и т.д), выступающие как помощники героя сказки. В главе даны также мифологические и ритуальные истоки сверхъестественных помощников героя сказки.

Третья глава, “**Советование и дарование во снах**”, посвящена сновидениям в сказках. Исследование сказок почти всех историко-этнографических регионов Исторической Армении показывает, что в числе разнообразных советчиков и дарителей (бог, ангел, царь, старик, старуха, животное, птица и т.д.), встречавшихся в ходе действий главного героя сказки, для достижения своей главной цели, он пользуется также советами и дарами, полученными во сне.

Сон рассматривается как временная смерть человека, в ходе которого душа главного героя сказки встречается с духом своего умершего предка, с богом или его посредником (старик, ангел, птица, животное, кто-то, какой-то голос и т.д.). Они, зная о будущем пути главного героя и о средствах преодоления трудностей, своими советами и, иногда, приподнесением дара, помогают его действиям.

Диссертация завершается **заключениями**, исходящими из исследования и **списка источников и использованной литературы** и приложениями.

В **приложениях** представлены типы и функции дарителей, советчиков и сверхъестественных помощников героя исследованных и выбранных армянских сказок, а также количественный анализ помощников героя, выступающих в армянских опубликованных сказках.

Marine Khemchyan

ADVISER AND DONOR IN ARMENIAN FOLK FAIRY TALES (TYPO-COMPARATIVE STUDY)

Abstract of the dissertation to receive a scientific degree of the PhD in philology in 10.01.05 "Folklore".

Defense of the thesis will be held on July 6, 2018 at 12:30 at the session of the SSC 003 special commission for the specialty of "Literary Studies" at the M. Abegyan Institute of Literature of the National Academy of Sciences of Armenia at the following address: Grigor Lusavorich 15.

The thesis is devoted to the typo-comparative study of donors, advisers, satellites possessing semi-mythological, supernatural powers, and miraculous objects (hereinafter assistants), who contribute to the actions of the main character of the fairy tale.

The subject of the study is the material of coexisting tales in all the historical and ethnographic regions of the historical Armenia (Ayrarat, Shirak, Artsakh, Utic, Syunik, Gugark, Alashkert, Manazkert, Bagesh, Mush, Hark, Taron, Sasun, Van-Vaspurakan, Moks, Kars, Karadakh, Tavush, etc.), published in the volumes of the series "Armenian folk tales", "Armenian ethnography and folklore" and in folklore collections of different regions.

The purpose of the study is to make a typo-comparative study of the character's assistants published in Armenian fairy tales.

In this sense, we have set the following tasks:

a) to study and to present the entire system of the assistants of the tale character;

b) to reveal their features and role in the development of the fairy tale plot;

c) to classify the tale character's assistants according to their functions and types;

d) to reveal the ritual-religious and mythological sources of the hero story assistants;

e) to present parallels of the motives related to the fairy tale character's assistant according to the international classification of the fairy tale types of Aarne-Thompson-Uther;

f) to give a quantitative picture of the character's assistant in the fairy tale in Armenian published fairy tales, which is done by a holistic study of the functions of donors and advisers in Armenian folk tales.

By the historical-comparative and analytical methods are selected the tales in which the assistants are needed for the research are selected. Assistants were classified, their types were distinguished, their functions were represented. Sometimes the descriptive method is used. The method of quantitative analysis gives a picture of the frequency of the performance of the fairy tale character's assistants, within the studied fairy tales, which is described in detail in the appendices of the thesis.

The thesis consists of an introduction, three chapters, conclusions, a list of abbreviations, a list of sources and references, and three appendices.

The **introduction** gives a general description of the research, the subject, purpose and objectives of the work, relevance, scientific novelty, practical significance, theoretical and methodological basis of the topic. The history of the Armenian fairy tale, with its acquisitions, a brief picture related to the study of domestic and foreign folklorists, as well as a brief summary of the chapters of the dissertation, is also presented.

In the first chapter, entitled "**Donors and advisers as characters contributing to the actions of the fairy tale protagonist**," the assistants to the main character of an Armenian fairy tale are classified by two degrees (the first subsection). The first degree classifies the assistants into five subgroups:

- 1) people and anthropomorphic donors and advisers;
- 2) animals and birds as donors and advisers;
- 3) donors and advisers representing nature;
- 4) characters with supernatural properties;
- 5) miraculous objects.

By the second degree of our classification the fairy tale character's assistants are distinguished according to their functions, types and actions. In the different subsections there are human and anthropomorphic (god, old man, dervish, royal (king, queen, prince, princess), old woman, angel, etc.), animal (horse, lion, sheep or ram, cow or ox, fox, doe, snake, frog, fish, ant, insects, etc.) and bird (eagle, pigeon, nightingale, parrot, swallow, sparrow, etc.) nature's (sea, river, spring, mountain, cave, stone, wood, tree, stump, leaf, etc.) donors and advisers. Features of the functions and types of donors and advisers, as well as their ritual-religious and mythological sources are presented.

In the second chapter, entitled "**The supernatural assistants of the fairy tale main character**," there are a number of characters with supernatural properties that accompany the hero of the tale (a man with enormous physical strength, a quick man, a man who drinks or eats a lot, a person who has incredible hearing or vision, a person that is able to move items, etc.) (first subsection).

In the second subsection, there is a system of magic objects (a ring, a carpet, a tablecloth, a cap, a pipe, a doll, a feather, hair, a wool, an apple, etc.), acting as fairy tale character's assistants. The chapter also contains the mythological and ritual sources of the supernatural assistants of the fairy tale character.

The third chapter, "**Donating and advising in dreams**", is devoted to the dreams in fairy tales. The research of the fairy tales from almost all the Armenian historical ethnographic regions reveals that among the various advisers and donors encountered during the actions (god, angel, king, old man, old woman, animal, bird, etc.), in order to achieve the ultimate purpose, the principal character of the tale uses also the advice and donations from the dream.

Sleep is regarded as a man's temporary death, during which the soul of the character encounters with a spirit of his dead ancestor, the God, or the mediator of the God (old man, angel, bird, animal, some human, some voice, etc.). Knowing about the character's future journey and the ways to overcome the difficulties, they assist the character's actions with their advice and sometimes giving a gift in a dream.

At the end of the thesis there are the conclusions of the research and the bibliography.

In the **appendices** the types and functions of donors, advisers and supernatural assistants of the studied Armenian fairy tale characters, as well as a quantitative analysis of the Armenian published fairy tale character's assistants are represented.